ConverseBank

Մրցույթի հիմնական պայմանները

1. Ընդհանուր դրույթներ

Սույնով (այսուհետ «Առաջարկ») սահմանվում են մրցույթի (այսուհետ, «Մրցույթ») պայմաններն ու կանոնները: Մասնակցելով Մրցույթին՝ Դուք հայտարարում եք, որ լիովին և անվերապահ ընդունում եք Առաջարկի սույն պայմանները:
Սույն Առաջարկը համարվում է մարքեթինգային միջոցառում:

2. Կազմակերպիչ

2.1. Մրցույթը իրականացվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, conversebank.am):

2.2. Մրցույթը անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Մրցույթի ժամկետ

3.1. Մրցույթի հայտարարությունը տեղադրված է Բանկի կայքում (https://conversebank.am/hy/blog) և վերջինիս սոցիալական էջերում:

3.2. Մրցույթը անցկացվում է 2023 թվականի օգոստոսի 15-ից ժամը 00:01-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը 23:59: Մրցույթի պայմանները նկարագրված են Առաջարկի 5-րդ բաժնում:

3.3. Մրցույթի արդյունքների ամփոփումն իրականացվելու է Բանկի ֆեյսբուքյան էջի (www.facebook.com/conversebank) ուղիղ հեռարձակման միջոցով՝ 2023թ.-ի մինչև դեկտեմբերի 18-ը:

3.4. Մրցույթի ամփոփումից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում կապի հաստատման անհնարինության դեպքում (Հաճախորդի չպատասխանելու, անհասանելի լինելու, Բանկին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու կամ այլ) Մրցույթի արդյունքները տվյալ Հաճախորդի համար համարվում են ուժը կորցրած:

3.5. Սույն Առաջարկում նշված ցանկացած ժամանակ պետք է համարվի Երևանի ժամանակը:

4. Մրցույթի մասնակիցներ

4.1. Ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ 18 տարին լրացած հաճախորդներ (ողջ տեքստում՝ Հաճախորդ), ովքեր Մրցույթի ընթացքում կներբեռնեն կամ կունենան գործող Կոնվերս Մոբայլ (Converse Mobile) հավելվածը և հավելվածի միջոցով առնվազն մեկ անգամ կկատարեն վարկի մարում:

4.2. Մրցույթին չեն կարող մասնակցել Կազմակերպչի աշխատակիցները:

ConverseBank

5. Մրցույթին մասնակցելու կանոններ

5.1. Մրցույթի մասնակից դառնալու համար հարկավոր է Կոնվերս Բանկի Կոնվերս Մոբայլ (Converse Mobile) օգտատեր լինել:

5.2. Հարկավոր է կատարել առնվազն մեկ անգամ “Վարկի մարում» գործարք՝ անկախ վարկի մարման քանակից, վարկի արժույթից և գումարից:

5.3 Առաջարկի 5.2 կետում նշված կանոնները կատարելու դեպքում Հաճախորդը էլեկտրոնային հասցեին և հեռախոսահամարին ստանում է անհատական կոդ, որով կարող է մասնակցել Մրցույթին:

5.4. Եթե Հաճախորդը գրանցված է Converse Mobile-ում, կատարում է «Վարկի մարում» գործարք հավելվածի միջոցով, ապա Հաճախորդը համարվում է Մրցույթի մասնակից:

5.6. Հաճախորդը Մրցույթի ընթացքում կարող է ունենալ մեկ անհատական կոդ:

5.7. Բանկը հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացնում և մրցանակը չի փոխարինում այլ նվերով:

5.8. Բանկը պատասխանատվություն չի կրում «Վարկի մարում» գործարքի իրականացման ընթացքում սարքի, կապի խափանման/անսարքության պատճառով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված «Վարկի մարում» գործարքների համար:

5.9. Բանկն իրավունք ունի հրաժարվել մրցանակներ տրամադրելուց, եթե Մրցույթի մասնակցի կողմից կատարվել է Մրցույթի պայմանների խախտում և/կամ զեղծարարարություն և/կամ չարաշահում:

5.10. Ուղիղ եթերի խաղարկության հաղթողները, մասնակցելով Մրցույթին, տալիս են իրենց համաձայնությունը իրենց անունները Բանկի պաշտոնական կայքում և/կամ սոց. կայքերի պաշտոնական էջերին տեղադրելու հարցում:

6. Հաղթողների սահմանում

6.1. Հաղթողների ընդհանուր թիվը՝ 5 հոգի:

6.2. Նվերների ցանկն է.

№	Նվերների ցանկ	Քանակ
1	iPhone 15	5 հատ

Եթե մինչև 2023 թվականի հոկտեմբերի 15-ը Apple ընկերությունը թողարկած չլինի Iphone 15 հեռախոս, ապա Մրցանակները կփոխարինվի Iphone 14 Pro հեռախոսներով:

6.3. Մրցույթում հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Հաճախորդներին տրամադրված անհատական կոդերից պատահական ընտրության միջոցով:

6.4. Մրցույթի արդյունքների ամփոփումը կիրականացվի Բանկի ֆեյսբուքյան էջի ուղիղ հեռարձակման միջոցով՝ մինչև 2023թ. դեկտեմբերի 22-ը ներառյալ: Մրցույթի ուղիղ հեռարձակման օրվա և ժամի մասին բոլոր մանրամասները Մրցույթի մասնակիցները կծանուցվեն իրենց էլեկտրոնային հասցեով կամ կարճ հաղորդագրության (SMS-ի) միջոցով:

6.5. Մրցույթի մրցանակները ստանալու և ամփոփիչ միջոցառման անցկացման վայրի ու ժամանակի մասին Բանկը կտեղեկացնի Հաճախորդին էլեկտրոնային հասցեին և/կամ հեռախոսազանգի և/կամ SMS միջոցով:

6.6. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների անհատական կոդերը կհրապարակվեն Բանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ մինչև 2023թ դեկտեմբերի 15-ը, Երևանի ժամանակով ժամը 23:59:

6.7. Հաղթող մասնակցի՝ ամփոփիչ միջոցառմանը ներկա գտնվելու անհնարինության դեպքում ամփոփիչ միջոցառմանը կարող է մասնակցել լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

6.8. Լիազորագիրը հնարավոր է տրամադրել նաև Բանկում, թվային ճանապարհով՝ ՀԾ ինտերնետ բանկ համակարգի միջոցով կամ Converse Mobile հավելվածի չաթ բաժնում:

6.9. Մրցույթի, մրցանակների տրամադրման մանրամասները ճշտելու համար Բանկը կապ է հաստատում Հաղթողների հետ հեռախոսով/էլեկտրոնային փոստով: Բանկը կստանա կամ կպահանջի միայն այնպիսի անձնական տվյալներ, որոնք անհրաժեշտ են համարում մրցանակը տրամադրելու և շուկայավարման նպատակներով օգտագործելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության: Հաճախորդների անձնական տվյալների վրա տարածվում է Բանկի գաղտնիության քաղաքականությունը: Մասնակցելով Մրցույթին՝ մասնակիցը համաձայնում է Մրցույթի բոլոր պայմաններին:

6.10. Ցանկացած լրացուցիչ գործողությունների և մրցանակի հետ կապված այլ ծախսերը կատարվում են հաղթողի կողմից: Մրցանակը տրվում է «այնպես, ինչպես կա»:

6.11 Բանկի հաղորդակցման տվյալները
Մանրամասների և հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի conversebank.am ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Email՝ info@conversebank.am
- WhatsApp՝ +374 95 511211
- Skype՝ conversebank-callcenter

Բանկը վերահսկվում է Կենտրանական Բանկի կողմից: